ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

---

23 մարտ 2020թ.

ՀՀ ԱԶԳԱՅՆԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Միրզոյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության, 109-րդ և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 65-րդ եւ 67-րդ հոդվածներով, օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ եմ ներկայացնում ՀՀ «Փաստաբանության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծը:

Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ գրությանը կցվում են՝

1) օրենքի նախագծի (հիմնական զեկուցող՝ Շաքե Իսայան).

2) օրենքի նախագծի ընդունման հիմնավորումը.

3) գործող օրենքի փոփոխվող և լրացվող հոդվածների վերաբերյալ տեղեկանքը:

Խնդրում եմ օրենքի նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Հարգանքով՝

ՆԱԻՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆ

ՇԱՔԵ ԻՍԱՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ
# «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Փաստաբանության մասին» 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-29-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 44-րդ հոդվածը լրացնել նոր 3-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Հանրային պաշտպանի հետ կնքվում է մեկ տարի ժամկետով աշխատանքային պայմանագիր, որի ժամկետը փաստաբանների պալատի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով կարող է երկարացվել մեկական տարով:»:

**Հոդված 4.** Օրենքի 45-րդ հոդվածում.

1) 5-րդ մասը շարադրել հետևյալ նոր՝ խմբագրությամբ.

«5. Հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության ապահովման հետ կապված ծախսերը փոխհատուցվում են պետական բյուջեից, որոնք ներառում են հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի, տեղակալների և հանրային պաշտպանների պաշտոնային դրույքաչափերը, լրացուցիչ աշխատավարձերի գումարները, ինչպես նաև հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության ապահովման, այդ թվում նաև՝ օժանդակ աշխատակազմի վարձատրության, նրանց ճանապարհային և հեռախոսային խոսակցության ծախսերի փոխհատուցման հետ կապված այլ ծախսերը:»:

2) 6-րդ մասի երկրորդ նախադասությունում «աշխատանքային» բառից հետո լրացնել «կամ ծառայությունների վճարովի մատուցման» բառերով.

3) 8-րդ մասում «նախատեսված գումարի» բառերից հետո լրացնել «(չհաշված լրացուցիչ աշխատավարձի համար նախատեսված գումարը)» բառերը:

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9-րդ մաս.

«9. Լրացուցիչ աշխատավարձի գումարը հաշվարկվում է հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի, տեղակալների և հանրային պաշտպանների աշխատանքի վարձատրության համար նախատեսված գումարի տասը տոկոսի չափով: Լրացուցիչ աշխատավարձի գումարը կարող է ծախսվել միայն հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին, տեղակալներին և հանրային պաշտպաններին լրացուցիչ աշխատավարձ տալու համար՝ փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված կարգով:»:

5) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10-րդ մաս.

«10. Հանրային պաշտպանի՝ փաստաթղթերով չհիմնավորված տրանսպորտային ծախսի ամսական թույլատրելի չափը Երևան քաղաքի և մարզերի համար հաստատում է արդարադատության նախարարը: Սույն մասում նշված ծախսի ամսական թույլատրելի չափը չգերազանցող տրանսպորտային փոխհատուցումը չի հարկվում:»:

**Հոդված 5**. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

**«Փաստաբանության մասին» գործող օրենքում փոփոխվող հոդվածների վերաբերյալ**

**Հոդված 44. Հանրային պաշտպանը**

1. Հանրային պաշտպան է համարվում հանրային պաշտպանի գրասենյակում աշխատող փաստաբանը, որը գործում է հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի ներկայացմամբ՝ պալատի նախագահի հետ կնքած աշխատանքային պայմանագրի հիման վրա:

2. Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով կարող է սահմանվել մրցույթ՝ փաստաբանների պալատի խորհրդի սահմանած կարգով:

3. Հանրային պաշտպանի հետ կնքվում է մեկ տարի ժամկետով աշխատանքային պայմանագիր, որի ժամկետը փաստաբանների պալատի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով կարող է երկարացվել մեկական տարով:

**Հոդված 45. Հանրային պաշտպանի գրասենյակի ֆինանսավորումը, հանրային պաշտպանի գործունեության ապահովման հետ կապված ծախսերի փոխհատուցումը**

1. Հանրային պաշտպանի գրասենյակի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին, որը պետք է ապահովի հանրային պաշտպանի գրասենյակի բնականոն գործունեությունը:

2. Հաշվի առնելով անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար դիմած քաղաքացիների հայտերի և փաստացի իրավաբանական օգնություն տրամադրելու դեպքերի վիճակագրական տվյալները՝ փաստաբանների պալատի խորհուրդը հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի առաջարկությամբ օրենքով սահմանված ժամկետում հանրային պաշտպանի գրասենյակի ծախսերի նախահաշիվը (բյուջետային հայտը) ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար:

3. Հանրային պաշտպանի գրասենյակի բյուջետային հայտը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունվելու դեպքում ընդգրկվում է

պետական բյուջեի նախագծում, իսկ առարկության դեպքում պետական բյուջեի նախագծի հետ ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով: Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով և փաստաբանների պալատ է ներկայացնում բյուջետային հայտի վերաբերյալ առարկության հիմնավորումը:

4. Հանրային պաշտպանի գրասենյակի դրամական միջոցները տնօրինում է փաստաբանների պալատի նախագահը:

5. Հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության ապահովման հետ կապված ծախսերը փոխհատուցվում են պետական բյուջեից, որոնք ներառում են հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի, տեղակալների և հանրային պաշտպանների պաշտոնային դրույքաչափերը, լրացուցիչ աշխատավարձերի գումարները, ինչպես նաև հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության ապահովման, այդ թվում նաև՝ օժանդակ աշխատակազմի վարձատրության, նրանց ճանապարհային և հեռախոսային խոսակցության ծախսերի փոխհատուցման հետ կապված այլ ծախսերը:

~~5. Հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության ապահովման հետ կապված ծախսերը փոխհատուցվում են պետական բյուջեից, որոնք ներառում են հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի, տեղակալների և հանրային պաշտպանների պաշտոնային դրույքաչափերը, ինչպես նաև հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության ապահովման հետ կապված այլ ծախսեր: Հանրային պաշտպանի գրասենյակին հատկացվող ֆինանսական միջոցները չեն կարող ծախսվել այլ նպատակներով:~~

6. Հանրային պաշտպանի և հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի տեղակալի պաշտոնային դրույքաչափը սահմանվում է Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազի համար օրենքով սահմանված պաշտոնային դրույքաչափին հավասար գումարի չափով: Անհրաժեշտության դեպքում փաստաբանների պալատի նախագահը կարող է ժամավճարային դրույքաչափեր նախատեսող աշխատանքային կամ ծառայությունների վճարովի

մատուցման պայմանագրեր կնքել հանրային պաշտպանի գրասենյակում չընդգրկված փաստաբանների հետ: Այդ դեպքում փոխհատուցվող գումարի չափը սահմանվում է Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազի աշխատանքային մեկ ժամի վարձատրության չափին համարժեք:

7. Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարն իր գործունեության համար ստանում է փոխհատուցում՝ հանրային պաշտպանի պաշտոնային դրույքաչափի քանիհինգ տոկոսով ավելի գումարի չափով:

8. Հանրային պաշտպանների գործունեության ապահովման հետ կապված այլ ծախսերի փոխհատուցման գումարը հաշվարկվում է հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի, տեղակալների և հանրային պաշտպանների աշխատանքի վարձատրության համար նախատեսված գումարի (չհաշված լրացուցիչ աշխատավարձի համար նախատեսված գումարը) երեսուն տոկոսի չափով՝ անկախ հանրային պաշտպանների կատարած փաստացի ծախսերից:

9. Լրացուցիչ աշխատավարձի գումարը հաշվարկվում է հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի, տեղակալների և հանրային պաշտպանների աշխատանքի վարձատրության համար նախատեսված գումարի տասը տոկոսի չափով: Լրացուցիչ աշխատավարձի գումարը կարող է ծախսվել միայն հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին, տեղակալներին և հանրային պաշտպաններին լրացուցիչ աշխատավարձ տալու համար՝ փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված կարգով:

10. Հանրային պաշտպանի՝ փաստաթղթերով չհիմնավորված տրանսպորտային ծախսի ամսական թույլատրելի չափը Երևան քաղաքի և մարզերի համար հաստատում է արդարադատության նախարարը: Սույն մասում նշված ծախսի ամսական թույլատրելի չափը չգերազանցող տրանսպորտային փոխհատուցումը չի հարկվում:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Առկա իրավիճակը և կարգավորման ենթակա խնդիրները.**

- **Հանրային պաշտպանների սոցիալական երաշխիքների մասով**

«Փաստաբանության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *հանրային պաշտպանի և հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի տեղակալի պաշտոնային դրույքաչափը սահմանվում է Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազի համար* ***օրենքով սահմանված պաշտոնային դրույքաչափին հավասար գումարի չափով***:

Այս կարգավորման նպատակն այն է, որ հանրային պաշտպանը՝ որպես քրեական արդարադատության ոլորտում դատախազության ներկայացուցիչներին հավասարազոր մրցակից կողմ, ունենա նույնանման սոցիալական երաշխիքներ:

Մյուս կողմից, այս կարգավորման նպատակը հանրային պաշտպանի աշխատանքի համար դատախազության ներկայացված պաշտոնին համարժեք կադրերի ներգրավվումը, մրցունակ առաջարկ ունենալն է և դրա արդյունքում պատշաճ որակի իրավաբանական օգնության ցուցաբերելը:

Գործնականում, սակայն, իրավիճակն այդ նպատակադրմանը չի համապատասխանում: Իրականում հավասարեցված են միայն դատախազի և հանրային պաշտպանի պաշտոնային դրույքաչափերը, մինչդեռ դատախազները հիմնական աշխատավարձից բացի ստանում են նաև հավելավճարներ և պարգևատրումներ, իսկ հանրային պաշտպանների համար այդպիսի հնարավորություն առկա կարգավորումները չեն նախատեսում: Ավելին, ի տարբերություն հանրային պաշտպանների՝ դատախազներն օգտվում են նաև այլ սոցիալական երաշխիքներից, օրինակ՝ 30 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա հերթական վճարովի

արձակուրդ, պարտադիր բժշկական ապահովագրություն, սոցիալական փաթեթի հավելյալ բաղադրիչներ և այլն: Այսպես.

«Դատախազության մասին» օրենքի 64-րդ հոդվածի համաձայն՝ *դատախազների վարձատրության, այդ թվում՝ հիմնական և լրացուցիչ աշխատավարձերի հաշվարկների և չափերի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:*

*Ըստ վկայակոչված օրենքի 6-րդ հոդվածի՝ պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց աշխատավարձը կազմված է նույն օրենքով սահմանված հիմնական աշխատավարձից, **լրացուցիչ աշխատավարձից և պարգևատրումներից**: Լրացուցիչ աշխատավարձը ներառում է **հավելումները և հավելավճարները**:*

**ա) Պարգևատրման մասով**

Նույն օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *յուրաքանչյուր մարմնի համար պարգևատրման ֆոնդը կազմում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով տվյալ մարմնի համար նախատեսված **աշխատավարձի տարեկան ֆոնդի առնվազն 10 տոկոսը**: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պետական ծառայողի պարգևատրման չափը հաշվարկվում է նրա հիմնական աշխատավարձի նկատմամբ:*

Փաստորեն օրենքի ուժով յուրաքանչյուր պետական մարմնի, այդ թվում՝ դատախազության աշխատավարձի տարեկան ֆոնդի **առնվազն** 10 տոկոսի չափով նախատեսվում է պարգևավճարների ֆոնդ, դրան հակառակ, հանրային պաշտպաններին նույնիսկ առանձին դեպքերում պարգևատրում տրամադրելու հնարավորություն օրենսդրորեն առկա չէ:

Ուստի առաջարկվում է օրենքով պարգևատրումների համար սահմանել հանրային պաշտպանի գրասենյակին լրացուցիչ միջոցներ հատկացնելու պարտադիր պահանջ:

**բ) Հավելավճարի մասով**

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող

անձանց վարձատրության մասին» օրենքի համաձայն՝ *դատախազին վճարվում է հավելավճար դատախազի պաշտոնում աշխատած* ***յուրաքանչյուր տարվա համար երկու տոկոսի չափով***: Բացի այդ, *դատախազը* ***դասային աստիճանի համար ստանում է հավելավճար***:

Քանի որ հանրային պաշտպանները պետական ծառայության մեջ չեն գտնվում և հետևաբար չեն գտնվում դասային աստիճանակարգության մեջ, նրանց նկատմամբ կիրառելի է նույն օրենքի միայն այն դրույթը, որը հավելավճար՝ որպես պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հաշվարկվող տոկոսային ավելացում վճարելու հիմք է դիտում աշխատանքային ստաժը, օտար լեզուների իմացությունը:

Հանրային պաշտպաններն ինչպես աշխատանքային ստաժի, այնպես էլ օտար լեզուների իմացության համար հավելավճար չեն ստանում՝ պետության կողմից այդ նպատակով միջոցներ չհատկացվելու պատճառով: Դրա արդյունքում գրասենյակում աշխատանքի երկար տարիների փորձ ունեցող հանրային պաշտպանները գտնվում են հավասար պայմաններում այդպիսի փորձ չունեցող հանրային պաշտպանների նկատմամբ, ինչը անհամաչափ մոտեցում է նրանց նկատմամբ: Բացի այդ, աշխատանքային ստաժի և օտար լեզուների իմացության համար հանրային պաշտպաններին հավելավճար տրամադրելու հնարավորության առկայության դեպքում հնարավոր կլինեն կանխել փորձառու և բարձր որակավորում ունեցող հանրային պաշտպանների արտահոսքը՝ ապահովվելով ցուցաբերվող անվճար իրավաբանական օգնության պատշաճ որակը:

Նշված նպատակադրումից ելնելով՝ առաջարկվում է աշխատանքային ստաժի և օտար լեզուների իմացության համար հանրային պաշտպաններին հավելավճար տրամադրելու նպատակով օրենքով սահմանել հանրային պաշտպանի գրասենյակին լրացուցիչ միջոցներ հատկացնելու պարտադիր պահանջ:

Նշված փոփոխությունները գործնականում իրականացնելու համար հանրային պաշտպանի գրասենյակին պետական միջոցներից անհրաժեշտ է տրամադրել հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի և հանրային պաշտպանների պաշտոնային դրույքաչափերի առնվազն 10 տոկոսի չափով հավելյալ միջոցներ, որը

տարեկան կազմում է 32,114,277 (երեսուն երկու միլիոն, հարյուր տասնը չորս հազար, երկու հարյուր յոթանասուն յոթ) ՀՀ դրամ:

- **Տրանսպորտային ծախսերի հատուցման մասով**

Հանրային պաշտպանների գործունեության ապահովման հետ կապված այլ ծախսերի փոխհատուցման համար նախատեսված է աշխատավարձի ֆոնդի երեսուն տոկոսի չափով գումար:

Այդ գումարով է կատարվում նաև հանրային պաշտպանների տրանսպորտային ծախսերը:

Երևան քաղաքում 31 հանրային պաշտպանի փոխադրումը կազմակերպվում է երկու տրանսպորտային միջոցներով, որոնք սակայն չեն հասցնում: Այդ պատճառով քրեական գործերով հանրային պաշտպաններին լրացուցիչ փոխհատուցվում է ամսական որոշակի գումար՝ երթուղային տրանսպորտից օգտվելու համար:

Խնդիրը կայանում է նրանում, որ առկա իրավակարգավորումներում, Փաստաբանների պալատը տրանսպորտային փոխհատուցման դիմաց ստիպված վճարում է եկամտային հարկ, քանի որ անհարկի բարդացվում է փաստաթղթավորված տրանսպորտային ծախս ցույց տալը: Օրինակ, որպեսզի հանրային պաշտպանը դատարան գնալու և վերադառնալու համար ստանա 200 ՀՀ դրամ, ապա պետք է ներկայացնի դատական նիստի ծանուցագիրը, դատարանում մասնակցելու փաստը հաստատող ապացույց: Դժվարություններ են առաջացնում, երբ նույն օրվա ընթացքում քննչական գործողություններին և դատական նիստերին մասնակցելու համար հանրային պաշտպանը ստիպված պետք է քրեական գործի բոլոր հատորներն իր մոտ պահել, ինչը երթուղային տրանսպորտով ապահովելը գրեթե անհնար է դարձնում:

Հարկ է նկատել, որ ներքաղաքային տրանսպորտի ծառայությունների համար կատարված ծախսերը հանրային պաշտպանները չեն կարող ներկայացնել նաև համապատասխան վճարումը հավաստող փաստաթուղթ չտրամադրվելու պատճառով:

Խնդիրը կարող է լուծվել «Փաստաբանության մասին» օրենքով նախատեսելով, որ որոշակի գումար հատկացնելը տրանսպորտային ծախսի դիմաց չի հարկվում: Ընդ

որում, փոխհատուցման թույլատրելի չափի սահմանումը առաջարկվում է վերապահել համապատասխան պետական մարմնին:

- **Հանրային պաշտպանների աշխատանքային պայմանագրերի ժամկետների մասով**

Հաշվի առնելով, որ հանրային պաշտպանների հաստիքների քանակը պայմանավորված է յուրաքանչյուր տարվա համար պետական բյուջեից հատկացված ֆինանսավորման չափից, ՀՀ փաստաբանների պալատը չի կարող երաշխավորել հանրային պաշտպանների հաստիքների հաստատուն քանակ և չի կարող հանրային պաշտպանների հետ կնքել աշխատանքային պայմանագրեր անորոշ ժամկետով, ուստի առաջարկվում է խնդիրը լուծել օրենսդրական փոփոխությամբ: Մասնավորապես առաջարկվում է «Փաստաբանության մասին» օրենքում կատարել լրացում՝ ամրագրելով, որ հանրային պաշտպանի հետ աշխատանքային պայմանագիրը կնքվում է մեկ տարի ժամկետով, որի ժամկետը ՀՀ փաստաբանների պալատի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով կարող է երկարացվել մեկական տարով:

ՀՀ փաստաբանների պալատում գործում է խորհրդի և նախագահի կողմից հաստատված ներքին իրավական ակտեր, որոնք առնչվում են հանրային պաշտպանի մրցույթին և հանրային պաշտպանի ջանասիրության գնահատմանը: Այս իրավական ակտերով, առավել ցածր միավորներ ստացած հանրային պաշտպանների որոշակի տոկոսի հետ աշխատանքային պայմանագրերը չեն երկարացվում և նրանք պետք է կրկին մրցույթի մասնակցեն: Այս համակարգը լրացուցիչ խթանման միջոց է ծառայում:

- **Հանրային պաշտպանի գրասենյակում չընդգրկված փաստաբանների մասով**

«Փաստաբանության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 6-րդ մասը հնարավորություն է տալիս փաստաբանների պալատի նախագահին անհրաժեշտության դեպքում ժամավճարային դրույքաչափեր նախատեսող «աշխատանքային պայմանագրեր» կնքել հանրային պաշտպանի գրասենյակում չընդգրկված փաստաբանների հետ:

Հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբաններին հանրային պաշտպանի գրասենյակի աշխատանքներում ընդգրկելն առավել հաճախ անհրաժեշտ է լինում առանձին գործերով, որպիսի հարաբերություններն իրենց բնույթով ծառայությունների մատուցում են ենթադրում, և այդ դեպքերում բովանդակային առումով պետք է կնքվեն ծառայությունների մատուցման պայմանագրեր: Աշխատանքային պայմանագրեր կնքելու պարտականությունը խնդիր է առաջացնում, քանի որ նույնիսկ մի քանի ժամ ծառայության դիմաց աշխատանքային պայմանագիր կնքելով, ՀՀ փաստաբանների պալատը պարտադրված է լինելու ապահովել աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված բոլոր երաշխիքները, որոնք լրացուցիչ ծախսեր են առաջացնելու փաստաբանների պալատի, հետևաբար և պետության համար: Ուստի, անհրաժեշտ է կարգավորման ձևակերպման մեջ կատարել համապատասխան լրացում:

## 2. Կարգավորման նպատակը և ակնկալվող արդյունքը

Առաջարկվող փոփոխությունների և լրացումների կատարման նպատակն այն է, որ որոշակի չափով համահարթեցվի հանրային պաշտպանների՝ որպես քրեական արդարադատության ոլորտում դատախազության ներկայացուցիչներին հավասարազոր մրցակից կողմի, և դատախազների սոցիալական երաշխիքներ: Հնարավոր լինի հանրային պաշտպանի աշխատանքի համար ներգրավվել որակյալ կադրեր, որպես գործատու ունենալ մրցունակ առաջարկ, կանխել որակյալ մասնագետների արտահոսքը:

Որպես վերջնական արդյունք ակնկալվում է կանխել հանրային պաշտպանի գրասենյակի կողմից ցուցաբերվող անվճար իրավաբանական օգնության որակի հնարավոր անկումը և ապահովել տրամադրվող օգնության որակի աճ:

## 3"Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է ՀՀ Ազգային Ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Նաիրա Զոհրաբյանի, պատգամավոր Շաքե Իսայանի և ՀՀ փաստաբանների պալատի կողմից:

## 3. Ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը

Առաջարկվող կարգավորումների նորմատիվ բնույթը պայմանավորված է նրանով, որ նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով, իսկ հանրային պաշտպանի գրասենյակի ֆինանսավորման և գործունեության հետ կապված այլ հարաբերությունները կարգավորվում են «Փաստաբանության մասին» օրենքով: